

* *

Ի խօշիւն ահեղադորդ օր ըստ օրէ ամ ըստ ամէ
Յանուն Աստուծոյ վառի գուպար դըժոխաբարկ.
Ըզդողի հարկանին ազինք, սարսեն հարըստութիւնք.
Ըզմահ և ըզմրբրիկ շքնեն փայլեն Սարակինոսք.
Ի մոլուցըս մարտին կայ և հընձէ Ահասվերոս.
Աչք նորա փայլանացայտ, աւեր իւր շանթի կայծակնընդոստ.
Ըզնա խուհապ իմն առաջօք հաշուի ասոխն ուանխոցելի,
Եւ գոռումն իւր խազմական հընշմանց հանգոյն գալարփողոց.
Ձի Աստուած Աստուած գոչեն շրթուներն. Աստուած ինքնին գողցեն
Ելանէր ի ծոցոյ նորուն ի մարտ և ի գուպար....
Դիմագրաւ շահատակեալ գնայ հասանէ նա յԱնդալուստ,
Որ իբր ըզդրախտն ի ծիրանիս տարածանէր երեկորոյ.
Պարտէզ փափկազուարճ՝ զոր ոչ բընաւ յուզեն շարիք....
Յեց ի սուսերն ի վայր հայի՝ շուրջ ի հանգիստ սըլփոխն մարտողք.
Պատանի գեղափրթիթ յարմարեալ զլարրալ ցութակին
Ի ձայն քաղցրանըւագ երգէր զԵդեմ՝ Ասվեր զոփայր.
« Ո՛չ, չիք ի մարտի՝ Աստուած, Աստուած է՝ ի նըւագա,
Ուսո՛ ինձ զերգըս քօ, առ զիմ հայիկ պերճաստորդ,
Ըզքնարդ ինձ տուր. — լի՛ր, գու մանուկ, դիւցապն, ես յերգըս նըւիրեմ՝

Շարայարեյի.




ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏԹԱԿԱՆ ՎԷՊ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ռ Յ Ա Ռ Ս Ա Ջ Ի Ն Դ Ա Ր Ո Ի

(Տես յ'էջ 79)



ԳԼՈՒԽ ԺԲ

ԳԵՏՆ ԱԴԱԹԱՆՔ

ՊԱՐԻՍ չի մոռցաւ փլաւիտ նդեմէսի
այրույն տուած խոստումն, և Անիկեոսի հետ
խօսակցելով, յարմարցուցեր էր այն ամէն
հնաքները՝ որոցմով պիտի յաջողէր իւր նը-
պատակին հասնել։ Այլ ևս ամփիթատրոնին
մէջ չէր, և կրնար ազատաբար զործել, ու
բովհետև Սեքստուս զինքն ըմբշապետէն գնած
էր։

Սուսերամարտից հաստատութիւնը, զոր

Հալմայեցիք հնարած են, ամփթալի կեղտ
մ'է այնպիսի ժողովրդեան համար՝ որ իւր
քաղաքակրթութեան վրայ կը պարծէր և
սակայն թոյլ տուած էր՝ որ արիւնահեղ մըւ-
ցանաց վայրենի սովորութիւնը իւր մէջ պլ
մտնէ։ Այս տեսակ զուարճութիւններ, որ
ի սկզբան մեծամեծաց յուղարկաւորութեանց
ժամանակ միայն կը կատարուէին, շուտով
նորեւուկ տեսաբան մը դարձաւ, որոյ վրայ

կը հսկէին վերակացուք, և որոյ բոլոր ծախքն հասարակաց գանձէն կ'ելնէր: Օր ըստ օրէ սուսերամարտից թիւն բազմանալով, իրենց գոյութիւնն արուեստի յոյժ շահաւոր որով և շատ նշանաւոր ճիւղերէն մին եղած էր: Այս տեսարաններն այնպիսի յարգ մը ստացան, որ իւրաքանչիւր նոր կայսեր նպատակն էր անոնց յաճախութեամբ և շրջապատմամբ իւր նախորդները գերազանցել: Սուեզնի ըսածին համեմատ Տրայքանոս մի քանի ամսոյ մէջ տասն հազար մարդ ի կռիւ հանեց: Այս եղիկներն սովորաբար պատերազմի մէջ բռնուած գերիներ էին, կամ երբեմն սարուկաներ՝ որք ինքնակամ կը վաճառուէին: Եւ պուսյի և Հնավենայի մէջ սուսերամարտից մարդարաններ կային. օրախաղութեան գրչխաւորն, կամ աւելի ճիշտն ըսելու համար, վերակացուն՝ որ կը գնէր զանոնք և ըստ հաճոյս կրնար վաճառել, ըմբշապետ կը կռուէր:

Սեքստոս շատ դիւրաւ տէր դարձաւ Պարսի. որովհետեւ ըմբշապետն տեսնելով հ. րիաասարդ ըմբշին ուսոյն և աշխուժութեան նուազիլը, այնչափ բարձր գնով անկից ազատելուն վրայ շատ ուրախացաւ:

Պարսիի փրկանաւորութիւնն եղած էր պրետորին ներկայութեամբ, և այն ամենայն կարգաց համեմատ՝ զորս պարտ էր այնպիսի պարագայից մէջ ի գործ դնել: Սեքստոս զերոյն ձեռքէն բռնած, զնա իւր վրայ դարձուցած և երեսին զարկած էր՝ ըսելով.

— Կ'ուզեմ որ այս մարդն ազատուի:

Պրետորն ալ պատասխանած էր, ձեռքի գաւազանն սուսերամարտին գլխուն վրայ դրնելով.

— Ես այլ նոյնն կ'ըսեմ, ազատ ես ըստ կանոնաց Կուրիներանց:

Յետոյ նուիրակն երեք տնգամ զարկած էր անօր, այնու իմացնելով թէ ազատած է:

Այս արարողութիւնն լրանալէ յետոյ Պարսի գնաց բնակեցաւ Սեքստոսի տունն. սակայն ամէն օր Անիկեստի կ'երթար՝ քրիստոնէական հաւատքը սովորելու համար: Ծերունի քահանային ձեռքն էր՝ որ փլաւիտ Կղեմեսի գաղտապարտութիւնն իմացաւ, և շնորհակալ եղաւ իւր վաղեմի բնկերակցաց,

որ կրցաւ ներկայ գտնուիլ մարտիրոսին մահուան և ձեռք ձգել անոր արեամբ ողորդած կտաւն: Սակայն զեռ պէտք էր փլաւիտ Կղեմեսի քրիստոնէական գերեզման մը տալ. Պարսի յանձն առաւ, և Անիկեստէն խրատուելով, և յափշտակութեան հնարից յաջողութեան վրայ վստահանալէն յետոյ՝ պատրկին ըլլ գնաց:

Սեքստոս սենեկին մէջ ամբողջ ժամեր խորին մտածմանց մէջ ընկղմած, զրեթէ ամենեկն զուրո չէր ելներ: Լատինեան դրան ըլլ տեսած հրաշքը, զինքն աւգիլն ցնցած էր, սակայն հաւատքն նոր ծագած լինելով իւր հոգւոյն մէջ, զեռ ևս նորա ապականեալ յօժարութեանց հետ կը պատերազմէր: Քրիստոնէութեան մէջ կամ ամենայնի պէտք է հաւատալ և կամ ամենայն ինչ մերժել: Եւ որ տարակուսով կը սկսի, անհաւատութեամբ կը վերջացնէ, բայց նա՝ որ խոնարհութեամբ կը հնազանդեցնէ իւր միտքը, որ շատ սահմանափակ է խորհուրդներն ըմբռնելու համար, գերբնական և աստուածային հաւատաց պարգեւք կը վարձատրուի: Աշխարհս մէջ ամենաթշուառ մարդն սկեպտիկեանն է, և ամենէն յանցաւորն նա է՝ որ անհաւատութիւն կը սերմանէ: Յիշուի, հանեցէք աղբատէն յոյսն ապագայ կենաց՝ ուր իւր աւաքինութիւնքն և տառապանքն պիտի վաքձաւորին, և զուր զինքն ամենաթգախտ արարածը պիտի բնէք՝ եթէ իւր հակամիտութիւնքն բարի են. իսկ եթէ չար ամենաչարն: Վայ ուրեմն արդի իմաստասիրաց որ ժամանակակից սերունդներն լուսաւորելու կնդդ պատրուակաւ իրենց իմաստակութեան խառքին մէջ վարած են զանոնք, և իրենց սկեպտիկեան վարդապետութեամբք կորացուցան: Վայ անոնց որ իրենց գրութեամբք ապականած են ժողովուրդը, չարեաց պաշապան եղեր, և տառապելոց արքայունքն աւելի զառնացուցած են... Այս ապականութեան և անկրօնութեան տարածոյներն ահաւոք համար պիտի տան Ամենակալին:

Շուտով Պարսի, Սեքստոսի ննջարանը մտաւ:

— Այս երեկոյ դուրս պիտի ելնեմ, ըսաւ պատրկին. և եթէ վաղը զիս չի տեսնես,

իմացիր որ կամ մեռած եմ կամ բանտարկեալ :

— Ո՛ւր պիտի երթաս, և ի՞նչ կը նշուանակէ այդ կերպ խօսելը, հարցուց պատրիկն հետաքրքրութեամբ :

Պարիս վարանեցաւ պատասխանելու. բայց մոտածելով որ Սեքստոս հիպատոսին բարեկամն էր, յայտնեց իրեն Դոմիտիլլայի առած խոստումն և դիտաւորութիւնը՝ որ մարտիրոսին մարմինը պիտի յափշտակէ :

— Քեզ հետ պիտի գամ և օգնեմ, որպէս զի գործերն աւելի ապահովութեամբ յաղորդին, պատասխանեց Սեքստոս :

Պարիս ի դուր աղաչեց, որ կեանքն այս պիտի վտանգաւոր ձեռնարկութեան մի չենթարկէ. նա որ և իցէ փաստի ականջ չի դրու : Իւր բարեկամին նշխարաց վերջին պարտքն հատուցանելու մոտածութիւնն զնա կ'ոգևորէր. և նոյն պահուն այնպիսի յուզեալ վայրկեանի մը մէջ էր, յորում հոգին աներկիւղ առաւարէզ կը կարգայ ամենայնի :

Այդ երեկոյին Սեքստոս և Պարիս քաղաքէն ելնելով՝ հրապարակը զիմեցին իրենց ծառայից հետ որոնք պատգարակ մը կը տանէին :

Գիշերն մթին էր. ոչ մի աստղ չէր փայլեր երկնից վրայ, և հրապարակին շինուածոց հսկայական սե կերպարանքները խաւարին մէջ կը նշմարուէին : Բոլոր Հռոմ լուծեան մէջ թաղուած էր. երիտասարդն ուրիշ ձայն չէին լսեր՝ իրենց դռնաձայնէն զատ՝ որ հետ զհետէ աւելի կ'երազէր. սրովհետեւ գիտնալով որ տանջանարանաց մէջ ձգուած վկային մարմինը գիշերի պահուն Տիբեր գետը պիտի նետուէր, կ'անապարէին :

Թէպէտեւ Անիկետոս վտանգացուցեր էր զՊարիս՝ թէ պահպան տրեւորը, որուն մայրը քրիստոնեայ էր, թող կուտար որ մարմինը վերցնեն, սակայն ձեռնարկութիւնը վտանգաւոր էր. որովհետեւ ապահովութիւն չի կար զօրականին խոստման վրայ, զոր կրնար փոխանակած ըլլալ այնպիսի մարդ մի՝ որ ընդդիմութիւն ցոյց տար : Այս պարագայի մէջ Սեքստոս կ'ուզէր ոսկւով այդ անձն կաշտել, մինչդեռ Պարիս կը խորհէր ձեռնութիւն գործածել : Քրիստոնէութեան քաղցրալից

սկզբունքն զեւ լաւ չէին արմատացած նորադաստիկ սրտի մէջ, ևս սուսերամարտի բնազդմունքն զեւ երբեմն կը զօրանային :

Անցան Սրբանուէր կոչուած ճանապարհէն, յորում յետ ժամանակաց Սեպտիմիոս Սեքստոսի յաղթական կամարը կանգնեցաւ, և Մամերտեան բանտին առջև հասան : Տան շանարանաց մուտքը միշտ բաց էր. հոն կը գնէին ոճրագործաց դիակները Տիբերիս գետը նետելէ յետոյ : Փլաւիոս Կղեմեսի արիւնշաղաղախ և խանդարած նշխարքն զետնի վրայ աւարածուած էին : Գետինը խրուած ջահ մը տխրօրէն կը լուսաւորէր այն մեռելավայրը, և լոյսն կը ցոյցանար պրետորականին զեղարդին վրայ, որ թիկունքը վկային նշխարաց դարձուցած էր՝ իբր թէ վախելով առնոց նայելու :

— Հոս կեցիր դու, ըսաւ սուսերամարտն պատրիկին՝ սանդղին առաջին աստիճանը ցոյց տալով :

Եւ զինուորին դառնալով,
— Պրաքսեղի որդին ես, հարցուց մեղմաձայն :

— Այո՛. ժամանակ մի կորսնցներ, և րովհետեւ ժամերը կ'անցնին, պատասխանեց զինուորն :

Եւ գեղարդը վար դնելով, պատի մը ծակէն յուան և կտոր մը կտաւ հանեց : Պարիս իսկոյն կապեց զնա, և բերանը խծեց : Թետոյ դիակը իւր բազկաց մէջ առնելով, Սեքստոսի հետ արագութեամբ սանդղէն իջաւ և զայն զետպակին մէջ դրաւ :

Պատրիկն այս տխուր տեսարանէն սաստիկ պզցուած, հրամայեց իւր ծառայից որ վիմինալ դառնան. և ինք Պարիսի հետ զետպակը վերցնելով՝ Մամերտեան բանտէն հեռացան և զէպի Կապենեան դուռն դիմեցին : Դեռ հազիւ մի քանի քայլ ըրած, ստիպուեցան կենալ, անանելով տան մ'առջև ժողոված բազմութիւն մի :

— Վկայկեան մի հանդիներ, ըսաւ Պարիս՝ զետպակը պատին յեցնելով :

Սեքստոսին ըսաւ որ հոն կենայ, և ինքն զնաց խառնուեցաւ ամբոխին մէջ՝ որ իմանայ պատճառը և տեսաւ՝ որ մատաղ ամուսնի ամուսնական յարկը կը մանէր : Պարիս թէ

պէտեւ կ'ածապարէր, բայց կեցաւ, անխոհեմ, մութիւն համարելով զեեսպակու այս բազմութեան մէջէն անցնիլ:

Երկու նորապսակ ամուսինք ծաղկապսակ եւ միմեանց ձեռք բռնած, տան դռնի աջ կեցած էին: Հինգ երիտասարդներ ձեռքեր, նին հարսանեաց յատուկ մօրեւ ջահեր բռնած կը շրջապատէին զանոնք: Ասոնց ետեւ կը գտնուէին աղախնայք, բռնած աղեկատ, բըր-զով պտտած իլ եւ կողով մը՝ որոյ մէջ կը գտնուէին թանկազին զարդեր եւ կնոջ պաճուճանաց համար հարկաւոր իրեր: Սրնգա՛հար մի ըստ ապարազային յանպատարտախց երգեր կը հնչեցնէր:

Երբ առէն ինչ վերջացաւ, մանկամարդն նոր տան դուռը արբա ճարպով օծեց, որպէս զի որ եւ է կախարհութենէ ազատ մնայ: Յետոյ յառաջացաւ անդառառակին մէջ, ուր ընդունեցաւ տան բանալիները իբր նշան՝ թէ այնտեան տեւոյն ընտանիքը պիտի խընամը: Հուսկ ապա ամուսնոյն հետ գաւիթը մտաւ:

— Ուրախութիւն, ծաղկանց պսակ եւ քաղցրեմուտք ձայներն իրենց համար են, իսկ մահն՝ ինձ համար, մտածեց Պարիս՝ Սքըստտի մօտենալով:

— Յանձն Աստղեան, այս երկու ապուշներն ամուսնացեր են որ մեզ ժամանակ կորսնցնէր տան, գոչեց Սքըստտ անհամբաւութեամբ:

Եւ վերցնելով զեսպակը, որ ծանրութեամբ կը ճնշէր իւր օտարը, ազատագրելոյն հետ զէպ ի Ալպեան ճանապարհ ուղղեց քայլերը: Ազատտու լայնցուցեր էր այդ ճամբան՝ Պոնտեան ճանիւնները ցամաքեցնելով. Դոմիտիանոս քիչ ժամանակ վերջ նորագած էր զայն, այնպէս որ մինչեւ ի Կապուա փառաւոր ճամբայ մը դարձեր էր, որուն երկու եզերքը կը գտնուէին Հռովմայեցի երեւելի ընտանեաց հոկայական մահարձանքն:

Ուղին շատ երկայն էր. երկու երիտասարդն հանգստանալու համար ստիպուեցան երկու անգամ կանգ առնուլ: Առաջին անգամ հանգչեցան Հռովմէն քաղաք միոն հետեւ. Ամին գետին մօտ, ուր՝ ըստ Ուլիզիսի՝ Կիւբելէ դիցուհոյն քուրմը անոր արձանները

կը լուային. իսկ երկրորդ անգամ՝ կեցան այնպիսի տեղ մը, ուր՝ ըստ բարեպաշտ աստուծոյն՝ երբ սուրբն Պետրոս Հռովմէն կը փախչէր, հանդիպեցաւ Քրիստոսի եւ հարցուց. « Տէր, ո՞ր կ'երթաս »: — « Հռովմ խաչուելու համար », կը պատասխանէ տեսիլն հեռանալով: Առաքեալն իմացաւ որ պէտք չէր մարտիրոսութենէ փախչիլ, եւ իսկոյն յախտեանկան քաղաքը գործաւ: Քիչ վերջ այդ տեղը փաքրիկ ճգնարան մը շինեցին, որ մինչեւ այն ժամանակ չէր մնացած:

— Շուտով կը հասնիմք, ըսաւ յանկարծ Պարիս, որ զէպ ի հեռուն կընայէր՝ գիշերուան մութութեան մէջ. բան մը նշմարելու նպատակով:

— Գոհութիւն դից. ես բուրդովին ու ժառպառ եղեր եմ, եւ այլ ես տալիս հեռուն չեմ կրնար երթալ, ըսաւ Սքըստտ:

— Աճապարհե՛ք, ըսաւ Պարիս՝ զեսպակը վերցնելով:

Քանի մի վայրկեան յետոյ հեռուն՝ Ալպեան ճամբուն ավակողմ փաքրիկ շէնք մը տեսան: Ամարանոցն էր պինկղիտոսի մ'արւոյն, որ իւր կայուածները մշակելու համար քանի մի գերիներով առանձնացած էր հոն: Պարիս զէպ այն առունը զիւնց, ուր դրան առջեւ ծառայ մ'իրեն կը սպասէր:

— Բաւական ժամանակ է որ մեր եղբարք հաւաքուած են, ըսաւ:

— Ընկերոյս տեղն անցիր, պտտաւ խանց առսերամարան:

Սքըստտի հետ գնացին առունը եւ զեսպակը գտնութիւն մէջ գրին: Պարիս դիպել իւր բազկաց մէջ առած՝ կը պատրաստուէր դուրս ելնել:

— Անիկետոս պատուիրեց ինձ՝ որ գիպկը թաղեմ, ըսաւ նա Սքըստտի. եթէ կ'ուզես հետա եկուր, ապա թէ ոչ՝ հոս ինձ սպասէ, եւ յետ մաքսիտալ սուրբ հողոյն մէջ լծազելու՝ կու գամ զքեզ կը գտնեմ:

— Կ'ուզեմ քեզի հետ գալ, պատարաւ խանց Սքըստտ:

Պատրիկն եւ առսերամարան անցան պարտիկն մէջէն, որ ժամանակաւ այնքան հոգի մշակուած բայց արդ կատարեալ ամայութեամբ

թեան մէջ ձգուած էր. ամէն կողմն ակբան բուսած էր : Մտան ստեսխապատ ճեմելոյ մը մէջ , և կեցան նստած օինկիտոսի մ'արձանին առջև , որ հազած էր նրբահիւս պատմունճանք , և ոտից ներքև խոշոր քար մը կար՝ կարծես դիպուածով դրուած և իրենց հետ գտնուած գերին ծափահարեց , և իսկոյն արձանին ետևէն մարդ մը դուրս ելաւ՝ օգնելու համար որ վերցնեն այն քարը , որ կը ծածկէր ստորերկեայ ճամբու մը մուտքն , ուր սանդղով կ'իջնէին :

Գերիններէն մին ջահ մը վառեց , Սեբստոսի տալով ,

— Ի՞նչիւր և Պարիսին լոյս բրէ , բաւ :
Սեբստոս հոտաւէտ օդոյ մէջ ապրելու վարժած ըլլալով , նախ վարանեցաւ իջնել այն սանդղէն . բայց յաղթելով իւր խորշման , սկսաւ իջնել և սուտերամարտին լոյս տալ : Ստորեաններն սակաւաթիւ էին , և զետնափորը տանող անցքն քիչ մը զառ ի վայր : Սեբստոս մտաւ կարմրագոյն և հրաբլուխային աստիկ խոնաւ հողոյ մէջ փորուած ցած և նեղ ճամբու մը մէջ . ուրիշ նեղ անցքեր զայս կտրելով կը ձեռնէին կատարեալ բաւիղ մը , որոյ մէջ Սեբստոս աշուշտ կը կորսուէր՝ եթէ Պարիս չըլլար :

Իսկոյն տեսաւ որ կը գտնուէր աւազոց կոչուած փոսին մէջ , ասկից Հոսիմայ շինուած ծոց համար շաղախ կը հանէին . բայց շատ ժամանակէ ի վեր թողուած էր , և իբր անհնարան կը գործածուէր ամբարանոցին տեւրանց , որք ուրիշ մը շինելու կարողութիւն չունենալով , իրենց գերիներ հոն կը թաղէին : Այս տեղս կը նմանէր անկէց մէկ մղոն հեռու գտնուած աւազոցին՝ որ աւելի ուշ քրիստոնեայ գերեզմանատուն մը պիտի դառնար սրբոյն Կալիստեայ :

Պատրիկն հազիւ կրնար շունչ առնուլ . սակայն այսու հանդերձ հետաքրքրութեամբ չորս կողմէն նայելով կը յառաջանար ձեռքի ջահին լուսով , որոյ ծուխն օդոյ նուազութենէն կը թանձրանար :

Հոսկ ապա հեռուէն լոյս մը տեսաւ , և քրիստոնէից ողբական և միակերպ երգը աւանդին հասաւ . սիրան ուժով ուժով կը բաբախէր : Քայլերն արագելով , նեղ անցքի մը

մուտքին առջև կանդ առաւ՝ աչացը ներկա , յացածն հետաքրքրութեամբ դիտելու համար :

Այս հրադիսային գետնին մէջ կամարակապ սենեակ մը փորած էին , պատերն ծեփած էին սպիտակ ներկով մի , որ խոնաւութենէ գեղեցած էր , և զարդարուած էին կոշտ կերպով նկարուած ծաղկեայ պսակօք : Տապանի աղանձին կաշով ձիթենոյ ճիւղը բռնած՝ կամարէն կախուած էր : Կանաչազարդ և ծաղկալից գմբէթի մը ներքև կը գտնուէր լայն և ցած քարէ սեղան մը , որոյ վրայ դրուած էին խաչ մը և երկու աշտանակներ :

Մէկ կողմը կը գտնուէին կանայք , իսկ միւս կողմն այր մարդիկ , Կղեմէս անուամբ ծերունի մը , զոր մենք արգէն Անիկետոսի տունը տեսանք , անոնց զինաց նստած էր : Սեբստոս բազմութեան մէջ իսկոյն նշմարեց զՓլորոնիս , և սկսաւ դէպ ի հոն երթալ , բայց Պարիս թեթեւ կերպով մը զպաւ իրեն՝ աղաչելով որ սրբալիցիին մուտքն ազատ թողու : Նա իսկոյն յետ դարձաւ , որով Պարիս կարողացաւ դիակը առաջուց պատրաստուած պատտասակալի մը վրայ դնել և Հաւատացեալը յարգանքով դիտեցին մարտիրոսին կտրատեալ նշխարները : Անիկետոս զանոնք խնդկելու համար քահանայական զգեստներով զարդարեալ մօտ եկաւ , աղօթք մ'ըրաւ քիչ մը յուզուած ձայնիւ , որուն պատասխանեցին հաւատացեալք միաբերան և Յետոյ . անմիջապէս երկու տիկնայք մարմինը պատեցին , իսկ երկու արք իրենց բազկաց վրայ առած՝ տարին անցքի մը մէջ , և հաւատացեալք Կղեմէսի և Անիկետոսի հետ հանդիսիւ հետեւեցան անոնց :

Պատերուն միոյն մէջ լայն խորշ մը բացուած էր . դիակիքը հոն հանգուցին զվկայն , արմաւենեայ երկու ճիւղ՝ կուրծքին վրայ դնելով , և վառած կաւէ ճրագ մ'այլ ոտից քով . յետոյ հաւատացեալք կարգաւ եկան և մէկ մէկ ամի հող նետեցին՝ ըսելով . « Նշնձ խաղաղութեամբ մինչև յարութեան օր » : Սեբստոս չէր անհրձակել մօտենալ . սակայն իւր բարեկամին անշնչացած մարմինը վերջին անգամ մ'այլ ողջունելու փափաքանաց չի կարենալով ընդդիմանալ , ինքն այլ քիչ մը հող առաւ , և զազապին վրայ նետելով՝ ը-

սաւ. « Մնաս բարեա՛ւ » : Ահագին քար մի զոցեց զիւցազին զերեզմանը, որ հազար անգամ իւր կեանքն հայրենեաց համար մահուան ենթարկելէ յետոյ՝ քաջութեամբ իւր Աստուծոյն համար մեռած էր : Քրիստոնեայք առթիւն համար աղօթարան դարձան :

Այդ դարու քաջայաղթ երևելի մարդիկ կը մեռնէին՝ իրենց գաւառութեան և առտուածային փրկչին վրայ ունեցած հաւատոց համար, որոյ խոստովանութիւն իրենց փառք կը համարէին. իսկ մեր օրերն անհաւատին հեղեղութիւնքն և աշխարհասիրին ծաղրածութիւնքը կը սարսափեցնեն բազմաթիւ քրիստոնեայներ, որոնք հաւատոց վրայ կ'ամաչեն, և կը կարմրին՝ օրինապահ կոչուելուն համար. մինչդեռ այն դարու մարդիկ անով զերպանց մեծ կը համարուէին : Խեղճ կառեղէն հրակայներ, զորս մոլորութեան քամին հողմացոյց դրօշաց պէս կը զարձնէ իրենց գասարկ պատանդանին վրայ :

Անկէկտոս հիւպատոսին արձնաթաթաւ զգեստին մէկ կտորը ներկայից բաժնեց, յետոյ կընթան հայրապետ իրենց քանի մի խօսք ըսաւ : Իւր ճառն պարզ էր և լի երկնային ճարտասանութեամբ. որ թէպէտ շատ չէր կրնար Հոռովմայ ճարտարախօսները զարմացնել, բայց մինչև հոգեոց խորերն թափանցեց և սաստիկ յուզեց : Հաւատացեալք զգացմամբ ուշ կը զնէին : Անկէկտոս Սեբաստի ներկայութեան վրայ մտահոգ կը թուէր,

և կը զըստովէր Պարսիս անխռնեմութիւնն՝ որ զնա այս գաղտնի ժողովարանին մէջ ըսրած էր :

Երբ ճառը վերջացաւ, հաւատացեալք յերկիր խոնարհեցան նոր երգ մը երգելով : Այս սիրազին ձայներն թափանցեցին մինչև Սեբաստի սիրան, որ արդէն իսկ պատկառելի խօսքերէն յուզեալ էր : Իւր հոգին սակաւ հաւատոց կենսատու լոյսն ընդունելու կը մոտենար :

Հաւատացեալք զոյգ զոյգ գետնադամբանէն դուրս ելնելով՝ քաղաքին մէջ ցրուեցան : Սեբաստս օր նեղ անցքի մը մէջ քաշուած էր չի տեսնուելու համար, որախուժեամբ դուրս ցատկեց և արբեցաւ հեշտութեամբ զիշեային օդոյն, որ միմին ստորերկրեայց մէջ անցունելէն վերջ՝ իրեն համար աւելի զով և մաքուր կը թուէր : Միայնակ գէպ ի տուն զիմեց, և կ'ուզէր երեկոյեան նշանաւոր զիպուածներն մոռնալ. յանկարծ Պարսիս իրեն հանդիպեցաւ, և երկուքն միասին սինկդիոսին այլոյն ամարանոցէն հեռացան : Սեբաստս աշխուժիւ կը խօսէր՝ ցրուելու համար իւր մտաց ներկայացած ազդեցութիւնքն, որոնք իրեն ցոյց կու տային օւղիղ ճամբան, և կը հրապարէին զինքն զէպ ի այն կրօնքն՝ որ հակառակ իւր կամաց իրեն կը մօտենար : Առաւտուն երկու երիտասարդք Սաբիտոսի պարտէզներն հրսան :

(Շարայարեյի)

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹԻՒ

Գ. ՏԱՐԻ “ ՇԱԽԻՆ ” Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի թէհրանում արմատական ուղղութեամբ և նախկին ծրագրով : « Շախի » բաժանորդագիրն է Պարսկաստանի համար մէկ թուման, կէս տարւանը վեց դրան : Արտասահմանի համար 3 բուրլի կամ 8 ֆրանկ. կէս տարւանը 2 բուրլի կամ 5 ֆրանկ :

Ռուսաստանից գրամական ծրարները պիտի ուղարկեն անպատճառ հետեւեալ հասցեով : Черезъ Баку въ Эвзели Россійской Императорской Миссiи въ Тегранъ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցեով և առանց մի բառ մոռանալու ուղարկել գրամները, այլապէս չեն ընդունւիլ : Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթագրամով. Հասցեն Եւրոպայի համար Téhéran, Rédaction « CHAVIGH ». այդ հասցեն պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները :